

Տ. ԳԱՐԵԳԻՆ Ս. ԱՐՔԵՊՈՂԱԿՈՊՈՍ (ԸՆՏՐԵԱԼ ԿԱՔՈՂԻԿՈՍ ՏԱՆ ԿԻԼԻԿԻՈՅ)

ԱՄԵՆԱՁՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կիլիկիո տան նորընտիր կաթողիկոս Գեղարքունիքին արքեպիսկոպոսը Հյուսացին Ամերիկայից նոր պաշտոնավայրը և կեղծուց առաջ «Հայաստանի հայոց եկեղեցի» պաշտոնաթերթի էջերում չոշափում է մի շարք կարևոր հարցեր։ Տ. Գարեգին Սրբազնությունը պաշտոնաթերթի ն. 9-ը «Հայ եկեղեցական և ազգային կեամբ» բաժնում իր նշանավոր ելույթի մեջ ուժգին հականարկած է հասցնում Ամերիկայի հայ համայնքը Ս. Էջմիածնից անջատելու, մեկուսացնելու վնասակար ու հակաթոռ տրամադրության, որ արտահարում է Փափառյան ստորագրությամբ մի հողվածագիր տեղական թերթերից մեկում։

Տ. Գարեգին սրբադանու խորապես գիտակելով Ս. Էջմիածնու պատմական նշանակությունը և յատագով հանդիսանալով Ս. Էջմիածնի անսասանությանը և նրա անխախտելի հեղինակությունը հայտարարում է։

«Յայտնում ենք մեր հաւատացեալ ժողովրդին, որ յարգելով իսկ Պ. Փափառյանի անձնաւորութիւնը և բարի նպատակը Հայաստանի նշանակութեամբ, նորա վերջին առաջարկութեան, այսինքն Ամերիկայի թեմը հանել էջմիածնի վերահսկողութիւնից և ենթարկել կիմիկոյ կաթողիկոսութեան» («Պայքար» Յունիս, 21, 1944) ոչ միայն համամիտ չենք, այլ եւ համարում ենք ոչ օգտակար։

Հայոց Հայրապետութիւնը եւ եկեղեցին մի է, և էջմիածնի Հայրապետը նորա հոգևոր դլուխն է և կիլիկիոյ կաթողիկոսի աւագ եղբայրը իւր պաշտօնով և զերքով։ Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը, ինչպէս և Երուսաղէմի և Կ. Պոլայ Պատրիարքութիւնները, իւրաքանչիւրը իւր Հնարաւորութիւնների և պայմանների ստհմանների մէջ, պահելով հանգիւթ թւր ներքին վարչական ձեակերպութիւնները, պէտք է օժանդակ

Հանդիսանայ եկեղեցու ամբողջութեան և բարոյական ներգործութեան զօրացման։ Մամաւորելով խօսքը մեր մասին, պիտի յայտնենք, որ իբրև ընտրեալ կաթողիկոս Տանն Կիլիկիոյ ոչ միայն էջմիածնի դէմ եկեղի չափ հակառակ ժայլ չենք անիլ, այլ և մեր բայրը հնարաւորութիւններով պիտի աշխատենք պահպանել մեր բարի եւ եղբայրական յարաքերութիւնները, օժանդակ համբիսանալով նիւթապէս եւ բարոյապէս էջմիածնի եւ Ամենայն Հայոց Հայրապետութեան Արռողին։

Այսուհետև գերաշնորհ Սրբազնը հորդում է հայ համայնքին նյութական և բարոյական ամեն աջակցություն ցույց տալ Ս. Էջմիածնին, նրա օրգան «Էջմիածն» ամսագրին և ճնմարանին։

Տ. Գարեգին Սրբազնը գրում է.

«Մատցել ենք «Էջմիածն» պարբերականի առաջին համարը, ամէն կերպով պիտի աշխատենք մասնակից լինել նորա յառաջադեմութեամբ և երբ ճնմարանի բացման բարի ըուրն էլ ստանանք, դարձեալ հետամուտ պիտի լինենք նիւթապէս և բարոյապէս օգտակար լինելու։ Երբ, Աստուծով պատերազմը վերջանայ, մեր սրտի փափաքն է, անձամբ ներկայ լինել էջմիածնում եւ մեր մասնակցութիւնը բերել Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան յաջողութեան մէջ, աւելի շեշտելով Հայ եկեղեցու և Հայրապետութեան միութիւնը։

Նույն պաշտոնաթերթի մեջ Տ. Գարեգին արքեպիսկոպոսը տոգորված հայ ժողովրդի միասնության զաղափարով և լուրջ մտահոգված հայ ժողովրդի ազդականութիւնները, ինդիկատուր առաջնորդութիւնները, իւրաքանչիւրը իւր Հնարաւորութիւնների և պայմանների ստհմանների մէջ, պահելով հանգիւթ թւր ներքին վարչական ձեակերպութիւնները, պէտք է օժանդակ

«Մեր ազգը, դոհանալ կարող ենք, որ մեռած չէ։ ճղակոտոր եղած բազմի հարածների տակ, բայց ոչ արմատախիլ եղած։ Մեր Հայրենիքի մի կարևոր մասը, Խորհրդ

գային Հայաստանի սահմանների մեջ, Ասու-
ւած շնորհել է մեզ, թէս ժողովրդի ½
մասն ապրում է Հայրենիքից դուրս: Դրա
կէսը ցրուած է Պարսկաստանից, իրանից
սկսած մինչեւ Ամերիկայի արեւմտեան
սահմանները: Խոնչպէս պէտք է պահպա-
նենք Սփիտովք, դրիթէ, միլիոնի չափ
Հայութիւնը, մի խնդիր է ազգային տեսա-
կէտով, որ դրակեցնում է մեր մտքերը և
մտահողութիւն պատճառում ամէնքի: Ե-
կեղեցին, Բարեգործականը, մամուլը, կու-
սակցական կարգմակերպութիւններն ու Հայ-
րենակցականները իւրաքանչիւրը իւր շրջա-
նի մէջ և իւր տեսակէտով մտահոգուած
է այդ խնդրով, Ազգապահպանութեան նուի-
րական խնդրով:

Այսուհետեւ Սրբազն արքեախակուպոսը
Հայ ժողովրդի միասնության, Հայ ժողո-
վրդի կենդանության, մեր ժողովրդի հա-
րատե գոյության աղքատուրը և միակ երաշ-
խիքը Սովետական Հայաստանի մեջ տեսնե-
լով՝ արդարացի և ճշմարտապես շնչտում
է Սովետական Հայաստանի տնտեսական և
կուլտուրական վերիքը, նրա ծաղկումը:
Դերաշնորհ Սրբազնը գրում է.

«Ամենից առաջ մեր առջերն ուղղած են
դէսի Խ. Հայաստանը, որ օրէցօր զարգա-
նում է նիւթապէս և կուլտուրապէս, ծաղ-
կում շինարարութիւնը նիւթական և տնտե-
սական, դրական-գեղարուեստական մարզե-
րի մեջ, և այժմ էլ լարած իւր բոլոր ու-
ժերը Խորհրդային ուրիշ ազգերի հետ մա-
քառում է իւր գոյութեան պահպանութեան,
ազգառութեան, ապահովութեան համար: Նա
է մեր կենդանության ազգիւրը եւ
յարաւելութեան երաշխիքը. բայց մենք
էլ մեր անելիքն ունինք, մեր դժուար պար-
տականութիւնը, այս ցրուած Հայութեան,
զանազան պետութիւնների և ազգութիւն-
ների մեջ, ենթակայ նրանց լեզուի, օրէն-
քի և քաղաքակալութութեան գորեղ ազգեցու-
թեան, միութեան, ամբողջութեան գաղա-
փարը պահել: Նախ և առաջ մենք պարտա-
ւոր ենք Հաւասարիմ և օգտակար քաղաքա-
ցիներ հանդիսանալ այն երկներին, որոնց
չիւրընկարութիւնն ենք վայելում, բայց և

պարտականութիւն ունինք հաւատարիմ
մնալու այն դարաւոր ժառանգութեան, որ
սուացել ենք մեր Հայրերից, որ մեր լեզուն
է, մեր դրականութիւնը, մեր մշակոյթն
ու սկասմութեան գիտակցութիւնը, մեր
ազգային եկեղեցին, մի խօսքով մեր Հո-
գևոր Հայրենիքը: Ամէն ժողովրդի համար
պէտք է Հայրենի երկիր, հող, ջուր, ուր
նա առջել կարողանայ, բայց այդ բոլորը,
դորա հետ և պետական կեանք, եկեղեցի,
միջոցներ են հոգեւոր Հայրենիքի տեղծա-
դործութեան համար: Հողն ու ջուրը սիմ-
բուլ են, նշանակ այդ հոգեւոր Հայրենիքի
համար: Դորանով է, որ մի ազգ հզօր է
դառնում, և այդ հոգեւոր Հայրենիքի պահ-
պանութեամբ է, որ պէտք է յարատեւի և
մեր գոյութիւնը, ուրիշ խօսքով անմահու-
թիւնը որպէս մաս հայ ամբողջութեան:

«Հայ ժողովուրդը Հայրենի հողի և ջրի
մասին մի գեղեցիկ աւանդութիւն ունի
հիւսած: Արշակ Բ. երկար պատերազմնե-
րից յետոյ յաղթուած Պարսից Շապուհ
թագաւորից և գերի ընկած, կամանեցնում
են յաղթողի գաճի առաջ: Արշակ խօսում
է հեղութեան և խոնարհութեան լիզուով,
և յայտնում, որ կը կատարէ յաղթողի կամ-
քը, կը լինի հնազանդ ըստ ամենայնի նորա
հրամաններին, եթէ աղաս արձակէ իրեն:

«Բայց խորհրդականներին լսելով, Հա-
յաստանից բերել է տավիս երկու բեռ հող
և երկու սակոր ջուր. հողը փոռում գա-
հոյքի առաջ և ջուրն էլ որակում վերան:
Եւ երբ Հարցաքննութեան էր բերուած գե-
րի թագաւորը, խօսում էր դարձեալ հեղ
և պատրաստակամութիւն յայտնում են-
թարկվելու նորա բոլոր հրամաններին. բայց
հէնց որ ամնկատելի անցնում էր հայ հողի
վերայ, ակսում էր խրոխասալ, Շապուհին
համարելով իւր ազգական Արշակունիների
զահի յափշտակիչ, և պատուիքում էր իշ-
նել գահից, որ վայել էր իրեն նատել:
Ահա Հայրենի հողի և ջրի սիմվոլիկ նշանա-
կութիւնը ժողովուրդական այս գեղեցիկ բա-
նականութեամբ («Հայաստանեայց եկե-
ղեցի», Ն. 9. 1944 թ. «Ս. Առաջնորդին
վերջին, խօսքը»):